

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սեռավարակներ, առաջացման
պատճառները, ախտանշանները և
բուժումը:

Առարկա՝ Կենսաբանություն

Հեղինակ՝ Անահիտ Մուրադյան

Մարզ՝ Արարատ

Ուսումնական հաստատություն՝ ՄԱՂԱՔԻԱ
ՕՐՄԱՆՑԱՆԻ ԱՆՎԱՆ
ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Պատրաստ է պաշտպանության

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	4
Գլուխ 1. Սեռավարակներ, ի՞նչ են սեռավարակները.....	6
1.1 Ժամանակին չբուժված սեռավարակներից առաջացած բարդությունները.....	6
1.2 Սեռավարակներից ի հայտ եկող ախտանշանները.....	7
Գլուխ 2. Սիֆիլիս.....	8
2.1 Վարակումը տեղի է ունենում.....	8
2.2 Հիվանդության նշաններն ու ախտանշանները.....	8
2.3 Սեֆիլիսի բուժումը.....	8
Գլուխ 3. Գոնորեա.....	9
3.1 Հիվանդության նշաններն ու ախտանշանները.....	9
3.2 Գոնորեայի բուժումը.....	9
Գլուխ 4. Տրիխոմոնիազ	10
4.1 Հիվանդության նշաններն ու ախտանշանները.....	10
4.2 Տրիխոմոնիազի բուժումը.....	10
Գլուխ 5. Խլամիֆիոզ.....	11
5.1 Հիվանդության ախտանշաններն ու նշանները.....	11
5.2 Հիվանդության բուժումը.....	11
Գլուխ 6. Սեռական օրգանների հերպես.....	12
a. Հիվանդության ախտանշանները.....	
b. Հիվանդության բուժումը.....	
Գլուխ 7. Միավ / Ձիավ.....	13
7.1 Թեստային աշխատանք.....	14
Գլուխ 8. Հետազոտություն.....	16

8.1 Հետազոտության մեթոդիկան.....	16
8.2 Հետազոտության արդյունքների ամփոփում թեստային	
Աշխատանքի միջոցով	16
Վերլուծություն.....	19
Եզրակացություն.....	19
Օգտագործված գրականության ցանկ.....	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի+ նպատակը: Քսանմեկերորդ դարասկզբին մարդկության առողջությանը սպառնացող չարիք են դարձել ալկոհոլի, ծխախոտի չարաշահումը, թմրա-միջոցների օգտագործումը, բռնությունը, ՄԻԱՎ վարակը և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները՝ **սիֆիլիս, գոնորեա, տրիխոմոնիազ, իլամիդիոզ , ուրեապլազմոզ, սեռական օրգանների հերպես, Միավ/Չիաս:** Հաճախացել են վաղա-ժամ հղիությունները՝ անցանկալի հետևանքներով: Երիտասարդ սերնդին համապատասխան գիտելիքներով զինելով, առողջ ապրելակերպին միտված ճիշտ դիրքորոշում ձևավորելով, ճնշումներին դիմակայելու, կշռադատված որոշում կայացնելու հմտութ-յուններ տալով՝ հնարավոր է բարելավել իրավիճակը: Պատանիները կյանքի տարբեր իրավիճակներում պետք է ի վիճակի լինեն բանակցելու և ճիշտ կողմնորոշվելու հոգուտ սեռական և վերարտադրողական առողջությունն ապահովող վարքագծի: Անհատի դիրքորոշումը ձևավորում է իր ունեցած տեղեկությունների հիման վրա:

«ՄԻԱՎ/ՉԻԱՆ-ի կանխարգելում և անվտանգ վարքագծի ձևավորում» դասնթացի նախաձեռնության նպատակը պատանիներին առողջ ապրելակերպին միտված վարքագիծ, վերաբերմունք և դրքորոշում ապահովող անհրաժեշտ գիտելիքներով զինելն է:

Երկար ժամանակ կարծրացած տեսակետ կար, թե չարժե դժբախտների հետ սեռական կյանքին առնչվող հարցեր քննարկել: Մտահոգությունն այն է, որ այդ կարգի քննարկումները կարող են դեռահասների մոտ մեծ հետաքրքրություն առաջացնել մղել վաղաժամ սեռական փորձի ձեռքբերմանը : Մինչդեռ հետազոտությունները պարզել են, որ ճիշտ սեռական դաստիարակության շնորհիվ երիտասարդներն ավելի ուշ են սկսում սեռական կյանքը և առավել անվտանգ սեռական վարքագիծ են դրսևորում: Տեղեկացվածությունը փորձարկման չի դրդում, այլ պաշտպանում է վտանգավոր իրավիճակներում: Դեռահասներն այս քննարկումների հիման վրա հետևություն են անում, որ սեռական հարաբերությունները հասունություն և երկկողմանի ցանկութ-յուն են պահանջում և չեն կարող պարտադրվել շրապատի կամ զուգընկերոջ ճնշման ներքո: Սեռական դաստիարակությունը հատկապես կարևորվում է մեր օրերում, երբ

նկատվում է սեռավարակներով հիվանդացության և ՄԻԱՎ վարակակիրների աննախադեպ աճ: Երբ գորզընկերն անտեղյակ և անփորձ են, զգալիորեն մեծանում է տարաբնույթ վտանգների՝ ներառյալ Միավով և այլ սեռավարակներով վարակվելու, նաև անցարկայի հղիության հավանականությունը: Դաստիարակության համակարգը պետք է նպատակաուղղված լինի զանազան գայթակղությունների հանդեպ վաղ տարիքից կամային ներքին դիմադրության մշակմանը:

Կրթական ծրագրերում առողջ ապրելակերպի և սեռական դաստիարակության ընդգրկումը նման է առողջությանը սպառնացող վարակիչ հիվանդությունների դեմ համընդհանուր պատվաստման. դա կարող է դեռահասներին և երիտասարդներին պաշտպանել վտանգավոր վարքագծային դրսևորումներից, նաև նախապաշարմունքներից ու մոլորություններից և հետա կյանքում նրանց առողջության գրավականը դառնալ:

Դասնթացը ակնկալում է.

- Նպաստել ՄԻԱՎ/ՁԻԱՀի սեռական ճանապարհով փոխանցվող վարակների , նաև՝ թթմրամոլության տարածման կանխարգելմանը:
- Զինել սեռավարակների կանխարգելման միջոցների, ուղիների մասին անհրաժեշտ գիտելիքներով, դրանք կիրառելու հմտություններ ձևավորել:
- Ձևավորել անձի առողջության պահպանմանն ուղղված պատասխանատու վարքագիծ:
- Ձևավորել սեռավարակներով ապրող մարդկանց հանդեպ հանդուրժողական, ոչ Խտրական վերաբերմունք:

Հետազոտական աշխատանքի կառուցվածքը: Հետազոտական աշխատանքը կազմված է՝ ներածական մասից, հիմնական մասից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1.ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐ, ԻՆՉ ԵՆ ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐ:

Սեռավարակները հիվանդություններ են, որոնցով մարդը վարակվում է սեռական հարաբերությունների ժամանակ: Բնակչության շրջանում սեռավարակները հայտնի են որպես վեներական հիվանդություններ (Վեներա անունից, որը, ըստ հռոմեական դիցաբանության, սիրո և գեղեցկության աստվածուհին է): Ներկայումս հայտնի են ավելի քան 20 հիվանդություններ, որոնք փոխանցվում են սեռական ճանապարհով: Հաճախ են հանդիպում գոնորեան, սիֆիլիսը, իլամիդիոզը, տրիխոմոնիազը, հերպեսը և այլն: Որոշ սեռավարակներ, սեռական ճանապարհից բացի, կարող են փոխանցվել նաև արյան միջեցով, կենցաղային ճանապարհով, նաև հիվանդ մոխր երեխային հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ և կրծքով կերակրելիս: Արյան միջոցով կարող են փոխանցվել սիֆիլիսը, հեպատիտ B-ն և հեպատիտ C-ն: Կենցաղային ճանապարհով վարակվում են հիմնական երեխաները՝ իրենց հիվանդ ծնողներից, ուլքեր, ունենալով հիվանդության ակտիվ դրսևորումներ, կոպտորեն խախտում են հիգիենայի կանոնները (օրինակ՝ ուտում են երեխայի հետ միննույն գդալով, քնում են նույն անկողնում): Կենցաղում մեծահասակները կարող են վարակվել որոշ սեռավարակներով, մասնավորապես՝ սիֆիլիսով:

Սեռավարակները բավականին տարածված են: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով, երկրագնդի յուրաքանչյուր վեցերորդ բնակիչ տառապում է այս կամ այն սեռավարակով: Հաշվարկային տվյալներով, աշխարհում տարեկան 340մլն մարդ է վարակվում բուժելի սեռավարակներով:

1.1.Ժամանակին չբուժված սեռավարակներից առաջացած բարդությունները:

- Կանանց մոտ փոքր կոնքի օրգանների բորբոքային հիվանդություններ:
- Արտարգանդային հղիություն , վիժումներ, անպտղություն:
- Արգանդի վզիկի և շագանակագեղձի քաղցկեղ:
- Վարակված մորից պտղի / նորածնի վարակում:
- շագանակագեղձի բորբոքում և իմպոտենցիա:
- Ներքին օրգանների և նյարդային համակարգի ախտահարումները:

1.2 Սեռավարակներից ի հայտ եկող ախտանշանները:

Սեռավարակների զգալի մասը կարող է ընթանալ առանց ակնառու ախտանշանների: Մակայն այդ դեպքում էլ վարակված անձինք վարակի աղբյուր են գուգրնկերների համար: Ավելին անախտանիշ ընթացող սեռավարակները ևս կարող են առաջացնել բարդություններ: Բոլոր սեռավարակները գործնականորեն բուժելի են, եթե ախտորոշվել են ժամանակին, և բուժում իրականացրել են համապատասխան մասնագետները:



ԳԼՈՒԽ 2: ՄԻՖԻԼԻՍ

Միֆիլիսը մարդկությանը հայտնի ճանապարհով փոխանցվող հիվանդություններից մեկն է: Անցնելով արյունատար և ավշային համակարգ՝ հարուցիչը տարածվում է ամբողջ օրգանիզմով, ներթափանցում բոլոր օրգանները և հյուս-վածքները:

2.1. Վարակումը տեղի է ունենում.

- սիֆիլիսով վարակված դոնորական արյան փոխներարկման դեպքում
- սիֆիլիսով հիվանդի օգտագործած ներարկչի կրկնակի օգտագործման հետևանքով
- կենցաղային շփումների ժամանակ. այս ճանապարհով հիմնականում վարակվում են երեխաներն իրենց ծնողներից, որոնց մոտ առկա են հիվանդության դրսևորումներ և որոնք չեն պահպանում անձնական հիգիենայի կանոնները:
- մորից երեխային՝ հղիության ընթացքում, ծննդաբերության ժամանակ կամ կրծքով կերակրելիս:

2.2. Հիվանդության նշաններն և ախտանշանները:

Հիվանդության ախտանշանները սովորաբար ի հայտ են գալիս վարակվելուց 3-4 շաբաթ հետո: Միֆիլիսով վարակված հղի կնոջ համար մեծ է վիժումների, մեռելաձնության կամ վարակված երեխա ունենալու վտանգը: Շատ հաճախ հատկապես կանանց մոտ հիվանդության նախնական փուլերն ընթանում են առանց ախտանշանների:

Ախտորոշումը կատարվում է արյան հետազոտությամբ, որը դրական է դառնում հիվանդության առաջին ախտանշանների առաջացումից 3 շաբաթ անց: Պետք է իմանալ, որ կրկնակի վարակումը և շրջապատողների շրջանում վարակի տարածումը կանխելու համար անհրաժեշտ է բոլոր այն անձանց հետազոտումը, որոնց հետ սիֆիլիսով հիվանդը եղել է սեռական կամ կենցաղային սերտ շփման մեջ:

2.3 Միֆիլիսի բուժումը:

Բուժման համար օգտագործում են որոշակի հակաբիոտիկներ: Ինքնաբուժումը վտանգավոր է և կարող է բարդություններ առաջացնել: Բուժումը պետք է անցկացնի միայն բժիշկ վեներաբանը:

ԳԼՈՒԽ 3: ԳՈՆՈՐԵԱ

Գոնորեան սեռական ճանապարհով փոխանցվող լայնորեն տարածված հիվանդությունն է: Հարուցիչը գոնոկոկն է, որը կարող է ախտահարել միզասեռական համակարգը, ուղիղ աղիքը, ըմպանը:

Գոնորեայով հնարավոր է վարակվել նաև ուրիշի անձնական հիգիենայի պարագաներ (ճիլոպ, սրբիչ) օգտագործելիս, սակայն կենցաղային վարակումը շատ հազվադեպ է: Գոնոկոկը կարող է գոյատևել 24 ժամ: Կենցաղային վարակումը շատ հազվադեպ է:

3.1 Հիվանդության նշաններն ու ախտանշանները:

Հիվանդության ախտանշանները կարող են ի հայտ գալ վարակվելուց 5-7օր հետո: Հիվանդությունը կարող է ընթանալ նաև առանց ախտանշանների: Գոնորեայի կասկածի դեպքում պետք է դիմել բժշկի: Չբուժված գոնորեան կանանց մոտ կարող է առաջացնել փոքր կոնքի օրգանների բորբոքային հիվանդություններ: Հիվանդությունը կարող է հանգեցնել անգամ անպտղության: Գոնորեան կարող է նորածնին փոխանցվել ծննդաբերության ժամանակ: Այս դեպքում կարող են ախտահարվել երեխայի աչքերը:

3.2 Գոնորեայի բուժումը: Գոնորեայով չափահասները բուժվում են հակաբիոտիկներով: Վերջին տասնամյակների ընթացքում ի հայտ են եկել հակաբիոտիկների նկատմամբ կայուն *Neisseria gonorrhoeae*-ի շտամներ, ուստի խորհուրդ է տրվում չբարդացած գոնորեա բուժել Յեֆտրիաքսոնի ներարկումներով, որը պետք է զուգակցել Ազիթրոմիցինի հաբերի հետ:

Եթե դուք ունեք ցեֆալոսպորինային հակաբիոտիկների նկատմամբ ալերգիա, որոնց պատկանում է նաև Յեֆտրիաքսոնը, ապա բժիշկն այն կարող է փոխարինել ներարկման կամ խմելու Գերիֆլոքսացինով:

Նորածիններ

Գոնորեայով մորից ծնված և վարակված նորածինները կարող են բուժվել հակաբիոտիկներով:

ԳԼՈՒԽ 4. ՏՐԻԽՈՄՈՆԻԱԶ

Ներկայումս իր տարածվածությամբ տրիխոմոնիազը առաջին տեղն է զբաղեցնում սեռավարակների թվում: Այդ հիվանդությամբ ողջ աշխարհում տառապում է ավելի քան 170 մլն մարդ: Հարուցիչը՝ տրիխոմոնադը, փոքր մակաբույծ է, որն ախտահարում է միզասեռական օրգանները:

Վարակումը տեղի է ունենում.

- Խոնավ սրբիչներ, ճիլոպներ օգտագործելու հետևանքով, որոնցում պահպանվում է մակաբույծի կենսունակությունը:

4.1 Հիվանդության նշաններն ու ախտանշանները:

Հիվանդության ախտանշանները սովորաբար ի հայտ են գալիս վարակումից հետո 4 օր մինչև 3 շաբաթվա ընթացքում: Հիվանդությունը կարող է ընթանալ նաև առանց ախտանշանների՝ հատկապես տղամարդկանց մոտ:

Բուժումը կատարվում է հակատրիխոմոնադային դեղամիջոցներով:

Շատ կարևոր է բուժման կուրսի լիարժեք ընդունումը, քանի որ բուժումն ընդհատելու դեպքում անհրաժեշտություն կծագի սկսել նորից: Բուժման ավարտից հետո անհրաժեշտ է կրկնակի հետազոտվել՝ բուժման արդյունավետությունը ճշտելու նպատակով:

4.2 Տրիխոմոնիազի բուժումը

Անհրաժեշտ է հիվանդին մանրակրկիտ հետազոտել՝ անցկացնելով զննում, փոքր կոնքի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն, մեզի և այլ հետազոտություններ: Ուրեապլազմայով միկոպլազմայով հնարավոր է վարակվել սեռական ճանապարհով, օրգանների փոխպատվաստման հետևանքով և մորից հղիության կամ ծննդաբերության ժամանակ երեխային փոխանցվելու արդյունքում:

ԳԼՈՒԽ 5. ԽԼԱՄԻԴԻՈՋ

Խլամիդիոզը ևս լայնորեն տարածված հիվանդություն է: Հաճախ ընթանում է առանց արտահայտած ախտանշանների, բավականին դժվար է ախտորոշվում և բուժվում, հանգեցնում է բազմաթիվ բարդությունների: Հիվանդության հարուցիչները՝ իլամիդիաները, ախտահարում են սեռական օրգանները, հոդերը աչքերի լորձաթաղանթը: Եթե հղի կինը հիվանդ է իլամիդիոզով կարող է ծննդաբերության ընթացքում վարակել իր երեխային:

5.1 Հիվանդության ախտանշանները

Ախտորոշման համար անհրաժեշտ է արյուն հանձնել : Հիվանդությունը կարող է ուղեկցվել նաև առանց որևէ ախտանշանի:

5.2 Հիվանդության բուժումը:

Ախտորոշման համար անհրաժեշտ է արյուն հանձնել:

Բուժումն անցկացվում է հակաբակտերիալ դեղամիջոցներով: Բուժման կուրսի ավարտից հետո անհրաժեշտ է կրկնակի հետազոտվել՝ բուժման արդյունավետությունը հաստատելու նպատակով:

ԳԼՈՒԽ 6. ՄԵՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՀԵՐՊԵՍ

Մեռական օրգանների հերպեսի հարուցիչը սովորական հերպեսի վիրուսն է:

Օրգանիզմ ներթափանցած վիրուսը տարածվում է նյարդաթելերով և ներխուժում նյարդարմատներ: Վիրուսը պահպանվում է օրգանիզմում ողջ կյանքի ընթացքում: Հիվանդությունն ընթանում է հաճախակի սրացումներով:


6.1 Հիվանդության ախտանշաններն են.

- Ախտահարման թուլություն, ջերմաստիճանի բարձրացում, հնարավոր են նաև ցավեր ոտքերի շրջանում:
- Ախտահարման շրջանում փոքրիկ կարմիր բծերի առաջացում, որոնք ձևափոխում են բշտիկների, վերջիններս էլ պատովելով՝ առաջացնում են կարմիր գույնի ցավոտ խոցեր:

Ախտորոշումը կատարվում է արյան հետազոտությամբ:

6.2 Հիվանդության բուժումը:

Բուժումն անցկացվում է հակավիրուսային դեղամիջոցներով:



ԳԼՈՒԽ 7. ՄԻԱՎ / ՁԻԱՀ

Մ---մարդու

Ի---իմունային

Ա---անբավարարության

Վ---վիրուս

Ախտահարում է մարդու օրգանիզմի տարբեր բջիջները և հատկապես իմունային (պաշտպանական) համակարգի բջիջները: Այս վիրուսով վարակված մարդկանց՝ Միավ վարակակիրների մոտ զարգանում է երկարատև ընթացքով քրոնիկ վարակիչ հիվանդություն՝ ՄԻԱՎ վարակ:

Ձ - ձեռքբերովի

Ի - իմունային

Ա - անբավարարության

Հ - համախտանիշ

Սա հիվանդության որոշակի արտահայտությունների ամբողջությունն է: ՁԻԱՀ-ը և ՄԻԱՎ-ը վարակի վերջնային փուլն է, զարգանում է ՄԻԱՎ-ով վարակված բոլոր մարդկանց մոտ, բնորոշվում է իմունային համակարգի գործունեության խաթարմամբ, որի հետևանքով օրգանիզմն անպաշտպան է դառնում զանազան վարակիչ և ուռուցքային հիվանդությունների նկատմամբ:

ՁԻԱՀ-ն առաջին անգամ արձանագրվել է 1981թ-ին: Այդ տարի ԱՄՆ-ի հիվանդությունների հսկման կենտրոնը (ՀՀԿ), որը ընդհանրացնու և վերլուծում է երկրի բնակչության հիվանդացության մասին տեղեկատվությունը, տեղեկություններ ստացավ հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում պնևմոցիստային թոքաբորբի մահացու ելքով հինգ դեպքի մասին: Այս հիվանդության հարուցիչը պատկանում է **պայմանական ախտածին մանրէների** թվին և առողջ մարդու համար վտանգավոր չէ, սակայն թուլացած իմունային համակարգ ունեցողների մոտ կարող է ծանր հիվանդություն առաջացնել: Գրեթե միաժամանակ այլ տարածաշրջաններից տեղեկություններ ստացվեցին երիտասարդների շրջանում: Կապոշիի սարկոմայով հիվանդության կտրուկ աճի մասին: Քաղցկեղի այդ տեսակը շատ հազվադեպ էր գրանցվում ԱՄՆ-ում, հիմնականում՝ տարեց մարդկանց, նաև՝ այն անձանց մոտ, ովքեր ընդունում էին իմունային

համակարգը ընկճող դեղամիջոցներ: Այս դեպքում ևս նոր գրանցված հոմոսեքսուալ տղամարդիկ էին, որոնց իմունային համակարգի անբավարար աշխատանքի համար որևէ ակնհայտ պատճառ չկար: Դրանից որոշ ժամանակ անց հոմոսեքսուալ տղամարդկանց շրջանում արձանագրվեց այնպիսի հիվանդությունների աճ, որոնց միակ ընդհանուր հատկանիշն իմունահին համակարգի ծանր ախտահարումն էր: Կլինիկական ախտանշանների այդ համալիրը որակավորվեց որպես բոլորովին նոր համախտանիշ և սկսած 1982 թվականից կոչվեց **ձեռքերովի իմունային անբավարարության համախտանիշ՝ ՁԻԱՀ:**

Երբ ՁԻԱՀ-ի դեպքեր սկսվեցին արձանագրվել կանանց և հետերոսեքսուալ տղամարդկանց մոտ պարզ դարձավ, որ հնարավոր է վարակվել նաև հետերոսեքսուալ հարաբերությունների ընթացքում: Ավելի ուշ, երբ սկսեցին արձանագրվել ՁԻԱՀ-ի դեպքեր արյան բազմակի ներարկումներ ստացած հիվանդների և թմրամիջոցների ներարկային օգտագործողների մոտ, ակնհայտ դարձավ նաև արյան ճանապարհով վարակվելու հնարավորությունը :

Երկար ժամանակ ՁԻԱՀ-ի զարգացման պատճառը մնում էր անհայտ: Կասկած չէր հարուցում, որ հիվանդությունը վարակիչ բնույթ ունի: Հիվանդության վարակիչ բնույթը վերջնականապես հաստատվեց, երբ 1983 թվականին հայտնաբերվեց հիվանդության հարուցիչ վիրուսը՝ ՄԻԱՎ-ը:

Վերջին տասնամյակներում լայն տարածում ստացած զբոսաշրջությունը, բնակչության ակտիվ տեղաշարժերը մի երկրից մյուսը (միգրացիա), նաև վարակի փոխանցման ուղիների և պաշտպանաման միջոցների մասին բնակչության լայն շերտեր և վերաճի համաճարակի:

ՁԻԱՀ-ի առաջին դեպքերի ախտորոշումից հետո, անցած տարիների ընթացքում, ՄԻԱՎ վարակի տարածումը ձեռք է բերել **պանդեմիայի** մասշտաբներ և դարձել մեր ժամանակների աղետը: Այսօր ՁԻԱՀ-ը դեռևս անբուժելի է և մտնում է մահվան պատճառ հանդիսացող ամենատարածված հիվանդությունների հնգյակի մեջ:

7.1 Կատարում ենք 12-րդ դասարանում թեստային աշխատանք:

Խնդրում ենք ուշադիր կարդալ հարցերը և նշել ձեր նախընտրած պատասխաններն

1. Ըստ ձեզ՝ ինչպիսի՞ն է իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով

- անհանգստացնող բարվոք չեմ մտածել
- 2. **Հնարավոր համարում եմ թե ՄԻԱՎ-ով ձեր վարակվելը**
 - այո ոչ դժվարանում եմ ասել

Ինչու՞ _____

- 3. **ՄԻԱՎ-ը կարող է փոխանցվել**
 - մեզի միջոցով
 - ձեռքսեղման միջոցով
 - սպասքի միջոցով
 - մոծակի խայթոցից
 - ընդհանուր զուգարանից
 - չախտահարված ներարկիչներից, ասեղներից, գործիքներից
- 4. **Փոխանցվում է, արդյոք, ՄԻԱՎ-ը սեռական ճանապարհով**
 - այո ոչ չգիտեմ
- 5. **Բուժելի՞ է, արդյոք ՁԻԱՀ-ը**
 - այո ոչ չգիտեմ
- 6. **Հնարավոր է ՄԻԱՎ-ով վարակվել թմրամիջոց ներարկելիս**
 - այո ոչ չգիտեմ
- 7. **ՄԻԱՎ-ի նկատմամբ հետազոտվելիս հնարավոր է ստանալ որոշակի արդյունք , եթե հավանական վարակման պահից անցել է**
 - մի քանի օր մեկ ամիս երեք ամիս կես տարի
- 8. **ՄԻԱՎ-ից պաշտպանվելու միջոցներից որո՞նք եք համարում առավել արդյունավետ** _____
- 9. **Ի՞նչ ներգործություն է ունենում ՄԻԱՎ-ը օրգանիզմի վրա**
 - առաջացնում է դիսբակտերիոզ
 - խոչընդոտում է բեղմնավորմանը
 - առաջացնում է ոսկրային հյուսվածքի քայքայում
 - քայքայում է մարդու իմունային համակարգը
 - քայքայում է արյան մակարդեղիության համակարգը
 - քայքայում է նյարդային համակարգը

ԳԼՈՒԽ 8. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվեց աշակերտների կողմից ձևավորված խմբային աշխատանքի միջոցով:

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ

Գիտելիքներ տալ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և դրանց հնարավոր հետևանքների մասին, ձևավորել սեռավարկներից խուսափելու ապահով վարքագիծ

8.1 Մեթոդիկան՝

Ուսուցիչը դասարանը բաժանում է 5 խմբի և յուրաքանչյուր խմբին <<Սեռավարակներ>> տեքստի մեկ օրինակ է տալիս՝ խնդրելով ծանոթանալ: Ապա խմբերից յուրաքանչյուր որևէ մեկ հիվանդության մասին տեքստ է տալիս և հանձնարում՝ տեքստից ստացած գիտելիքների հիման վրա պաստառ պատրաստել հետևյալ ենթավերնագրերով՝

1. Հիվանդությունը
2. Ախտանշանները
3. Վարակման ուղիները
4. Ազդեցությունը, հետևանքները
5. Բուժումը
6. Կանխարգելումը՝

Ավարտվելով՝ խմբերը, պաստառները փակցնելով պատին, ներկայացնում են իրենց աշխատանքները: Այնուհետև ուսուցիչը խմբերին թեստեր է բաժանում և առաջարկում է լրացնել՝ տվյալ պնդումը ճի՞շտ է, թե՞ սխալ: Ավարտելուց հետո ուսուցիչը բարձրաձայն ընթերցում է յուրաքանչյուր պնդումը, իսկ աշակերտները տեղերից հնչեցնում են իրենց պատասխանները: Ոչ ճիշտ պատասխանների դեպքում ուսուցիչը լրացուցիչ պարզաբանումներ է անում, և երեխաներն ուղղում են իրենց սխալները:

8.2 Հետազոտության արդյունքների ամփոփում թեստային աշխատանքի միջոցով:

	Ճիշտ է	Միսալ է
1.Բեղմնականիսիչ հաբերը լիովին պաշտպանում են սեռավարակներից:		
2.Սեռավարակներով չեն վարակվում լողավազանում լողանալիս:		
3.ՄԻԱՎ վարակը ևս փոխանցվում է սեռական ճանապարհով:		
4.Սեռավարակներից պաշտպանվելու ամենահուսալի միջոցը պահպանակի օգտագործումն է:		
5.Առանց բժկին դիմելու կարելի է դեղատնից դեղ զնել և բուժվել սեռավարակից:		
6.Սեռավարակները կարող են վտանգել երեխա ունենալը:		
7.Մեկ անգամ սեռավարակով հիվանդանալուց հետո իմունիտետ է առաջանում, որը պաշտպանում է կրկին հիվանդանալուց:		

8.Մարդու տեսքից երևում է՝ սեռավարակ ունի, թե՛ ոչ:		
9.Սեռավարակ ունեցողը հաճախ կարող է չիմանալ այդ մասին և վարակել ուրիշին:		
10.Եթե սեռավարակի ախտանշաններն անհետացել են՝ կարելի է չդիմել բժշկի:		
11.Հիգենային հետևելը սեռավարակներից պաշտպանելու գրավական է:		

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին հետևյալը՝

Խմբային աշխատանքի արդյունքում, որը վերջում ամփոփվեց թեստային աշխատանքի միջոցով, ևս մեկ անգամ ապացուցվեց, որ այսօրվա դեռահասների մեծ շրջանակում սեռական դաստիարակության ոչ պատշաճ վերաբերմունքի հետևանքն է այսօր ներկայիս ժամանակահատվածում մեծ աճ գրանցող սեռավարակները:

Սեռական դաստիարակությամբ կրթված և դաստիարակված այսօրվա սերունդը վաղվա առողջ ապագայի հենասյունն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ առավել հաճախ վաղ սեռական կյանքով սկսում են ապրել հետաքրքրությունների սահմանափակ շրջանակ ունեցող դեռահասները: Ուստի անհրաժեշտ է մանուկ հասակից օգնել երեխային, որ ընդլայնի իր հետաքրքրությունների շրջանը, զարգացնի իր ընդունակությունները: Դեռահասը պետք է գիտակցի, որ սեռական մերձեցումը կարող է երջանկություն պարզել միայն այն ժամանակ, երբ հիմնված է սիրո վրա՝ առանց որի կորցնում է իր իմաստը և միայն դառնություն է պատճառում, որ իսկական սիրո զգացումն ապրելու համար անհրաժեշտ է անձի հասունություն, ինչը ձևավորվում է տարիների ընթացքում: Դեռահասը պետք է հստակ գիտակցի նաև, որ վաղ սեռական հարաբերությունները կարող են վտանգել առողջությունը, կրթություն ստանալու և մասնագիտություն ձեռք բերելու հնարավորությունը (անցանկալի հղիություն), այսինքն բացասաբար անդրադառնալ անհատի հետագա ողջ կյանքի վրա:

Սեռական կյանքի վերաբերյալ համապատասխան գիտելիքները հզոր զենք են նախապաշարմունքների ու մոլորությունների, սեռական հարցերը գռեհկացնելու դեմ և կարևոր նշանակություն ունեն սեռական կյանքի հիգիենայի վերաբերյալ ճիշտ պատկերացում կազմելու գործում: Սեռական դաստիարակությունը կոչված է պարզաբանելու մարդու ապրումներն ու զգացումները, նաև՝ դրանց կապը ցանկությունների ոլորտի հետ և միաժամանակ նշելու սեռական հակման համապատասխան տեղն անհատի զարգացման ամբողջության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

2. Հեղինակային խումբ՝ Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան, Լ. Շահբազյան ,
Ժ. Պետրոսյան
3. Առողջ ապրելակերպի դասավանդման մեթոդական հիմունքները՝ ձեռնարկ 2
մասով՝ Երևան 2015:
4. Համացանց